Այմուտավակկիլ ուղարկեց Բուղայ մեծին Հայաստան՝ Իւսուփի արեան վրէժը գնելու համար. սա գնաց եւ սկսեց Արզնից. ձերբակալելով Մուսէ Ի. Զուրարին, որ Իւսուփի սպանման համախոհ էր, Բուղան ուղարկեց նորան նորա եղբարց հետ միասին Սուլթանի մօտ, իսկ ինքն բանակեցաւ Խոյթուում. այստեղ պատերազմեցաւ նա Հայերի բազմութեան՝ Իւսուփ Ի. Մուհամմեդի սպանողների հետ, յաղթեց նոցա եւ կոտորեց նոցանից 30000 մարդ, իսկ նոցա սրդիքը ժողովրդի հետ միասին գերեց եւ վաճառեց։

Ապա Բուղան գնաց Աղբակ գաւառը եւ գերեց Աշոտ որդի Համզայի հայր Աբասի. այնտեղից մեկնեցաւ Դուին եւ յետոյ Թիֆլիս։[1]

238 թ. Բուղան յաղթեց Իսահակ Ի. Իսմայէլին՝ բանի Օմայայի ստրուկին՝ Թիֆլիսում եւ այրեց քաղաքը։ Իսահակ Ի. Իսմայէլ ամրացել էր Թիֆլիսում, որ ըստ մեծ մասին փայտից էր շինած։ Երբ Բուղան յարձակեցաւ քաղաքի վերայ, նա հրամայեց նաֆթային անօթներ վառել եւ նետել շինութեանց վերայ. քամին բարձրանալով՝ պատեց հրով Իսահակի ամրոցը եւ հարեւան շէնքերը։ Թուրքերը եւ Մաղրեբացիք մտան նորա մօտ, ձերբակալեցին նորան որդու հետ եւ տարան Բուղայի մօտ, որ հրամայեց կապանքների մէջ նորա պարանոցը կտրել, իսկ մարմինն՝ խաչել. քաղաքում այրեցան մօտ 50000 բնակիչք։ Դորանից յետոյ Բուղան յարձակեցաւ Իսայ Ի. Իւսուփի՝ Ստեփաննոսի քրոջ որդու վերայ եւ ճակատեցաւ նորա հետ Փայտակարան քաղաքում. Իսայ ամրացաւ Կբիշ[2] ամրոցում, Բուղան գրաւեց բերդը,

---

1 Հմմտ. Թովմայ Արծրունի, (Ք. Պատկանեան, 1887, Ս. Պետերբուրգ) էջ 119—120։

2 Արաբացի ձեւագրի كبيش ձեւը հարկաւ ուղղելու է كثث (Քթիշ). Ցե՛ս Թովմայ Արծրունի 178 "լեառն ասուր (յԱղուանս) անուանեալն Քթիշ"։